

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

ՆԻՒԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ¹⁾

Թերմանների այս ժողովածուն արտագրել եմ Ղարաբաղի կոնսիստորիայի 1850 թ. № 84 գործից, ուր և կան պարունակելու պատճենները:

Այս թարգմանութեանց լեզուն շատ անկանոն է, բայց մենք թողել ենք նոյնութեամբ շատ հասկանալի պատճառներով: Յատուկ անուններին պիտի կասկածանքով վերաբերուել, որովհետեւ հենց իմ ձեռքի տակ դտնուած մի շարք այլ վաւերագրերում դոքա փոփոխուած են հանդէս դալիս: Այս ֆերմաններով պարսից շահերը և խաները վաւերացնում են Գանձասարի վանքի հողերի սեփականութիւնները, պատուիրելով իրենց ստորադաս իշխանաւորներին ըստ «շարիի լուսաւոր օրինաց» հսկելու և թոյլ չտալու հակաօրինական զանցառութիւններ թէ նուիրատուների ժառանգների և թէ այլոց կողմից:

Մեր բոլոր ծանօթութիւններն ու զիտողութիւնները, որ այս գէպքում իրեւ բանահաւաքի կարեօր է, կտանք երբ ամբողջութեամբ կտպագրենք մեր ձեռքի տակ եղած բոլոր պատմական նիւթերը:

Ա. Հ.

Ա. Էջմիածին

№ 1

—Որովհետեւ յայտնի եղեւ, թէ ի վազ ժամանակաց հետէ վարդապետք և այլ քանի մի անձինք ներքոյ յիշեալք զքանի մի զանկ կալուած զնեալ էին յերկրին զարապաղու, այլ և յետ թուականին, յորում մեծ վանքն խաչենոյ կառուցեալ է, նուիրեալ և յետադայ կերպիւ ի վախիք նոյն վանիցն այսու, զի որ ոք բնակեացի անդանոր ի վարդապետաց կամ ի լուսարարաց նորին ծախոնցէ

1) Տես «Արարատ» № 4, էջ 374—376.

ի մնունդ իւր (զարդիւնս նոցին) (վոց) և մի՛ ոք ի սերնդոց, յազգէ, յընկերաց և ի ժառանգաց նուիրատուացն այնոցիկ ներելով զմշակմն հերկրագործութեանց յիշեալ նուիրակալուածոցն պահանջեսցէ ինչ ի նոցանէ ի բահրայ:

1. Գիւղն կէլջիւկ (կասրայ) զորոյ զվեց դանկն դնեալ Սարգիս կաթուղիկոսն որդի Հատիր—Մելիքին՝ նուիրեալ է ի վախփ վանիցն յ995 ամի թուականին (Հայոց) (ի 1546 ամի փրկչին):

2. Անդաստանն Հանքաց երկանաքարոց, զորոյ զվեց տանկն նուիրեալ է ի վախփ (նոյն Սարգիս կաթուղկոսն) յ990 (ի 1541 ամի փրկչին):

3) Անդաստանն Արատունոց (պտրանոց) երկու դանկ, հանդերձ շրջակայ տեղեօքն յ990 ամի (ի 1541 ամի փրկչին):

4. Անդաստանն Քուռալան (կուռալան) շորս դանկ:

5. Բոլոր անդաստանն Տանձածորոց (Թեաքյար մուտտու) զոր նուիրեալ է մի վախփ պէրն Սէյտունն որդի Ազբաստին յ916 ամի (ի 1467 ամի թուականին փրկչին):

6. Ազարակն Մսիրշահայ (Շահմասուր) զոր նուիրեալ է ի վախփ թոռն Զալալայ Տուրսունն յ942 ամի (ի 1493 ամի փրկչին):

7. Ազարակն Յեմի զոր նուիրեալ է ի վախփ որդի Փիրհամբայի Սմբատն յ920 ամի (ի 1471 ամի փրկչին):

8. Ազարակն Ալմաջայ, զոր նուիրեալ են ի վախփ որդիք Աթաբէկի Այտինն և Խիմչէն յ916 ամի (ի 1467 ամի փրկչին):

9. (Անյայտ անուն տեղւոյ, որ կարէ համարել Կոնջի հողն) զոր նուիրեալ է ի վախփ պըրն (Զալալի) պաստամն յ920 ամի ի 1471 ամի:

10. Բոլոր զիւն Աշմանայ, զոր նուիրեալ է ի վախփ որդի Սէյտունի վէլիջանն ի յեղէն Ազբաստայ յ949 ամի (ի 1500 ամի):

11. Անդաստանն Քեարքեաջանն (Կարկաղանց) երկու դանկ, Անդաստանն փատուրանց կամ փառուռանց (պտրանոց խութ) երկու դանկ Անդաստանն Մաղկոցոց (Ճաղկավանց) երկու դանկ, զոր նուիրեալ է ի վախփ Մելիքն (որէ թոռն Ազբաստու յ948 ամի Հայոց (ի 1499 ամի):

12. Գիւղն Վերին Վանից, զոր նուիրեալ է որդի Զալալէն Աթաբէկն յ755 ամի (1306 ամի),

13. Բոլոր Անդաստանն Զուզտունոսի, որ և վարդանբերանց, զոր նուիրեալ է ի վախփ որդի Մեջլիսի Ուլուրէկն յ856 ամի (1407 ամի):

14. Բոլոր ազարակն պարսնեանց, բոլոր ազարակն Թարլատանի, աղարակն Քէքեան և Կիւփլակ, զոր նուիրեալ է որդի Վարդանայ Վասակն (725 ամի (ի 1276 ամի):

15. Բոլոր ազարակն Տինկի (Տներկիր՝ Տինկի հող) զոր նուի-

բեալ է ի վախիք որդի Գրիգորի (Աբաջուրի) Բարսեղն յ 724 ամի, (ի 1275 ամի):

16. Գիւղն Մաշախ վեց դանկ, որև Հելվալու և զիւղն Ազայեայ զրոս նուիրեալ է ի վախիք Սարգիս Առաջնորդն յ 706 ամի (ի 1257 ամի):

Իսկ եթէ ոք յազգէ նոցա ի վերոպրեալ անդաստանաց կամ յազարակաց պահանջնացէ զրահրայ (Տասանորդ կամ համ վասն հողոյ) անէծք Ա՛յ հասցեն ի վերայ նոցա առաջի իշխողաց ժամանակին և հողերը դատաւորաց, անլսելիի մնացեն (Խօսք սոյնպիսեաց): Այսչափ բանք գրեցան բատ վկայութեանց յամսեանն ժամագան Ալմուրարեաք ի 1046 ամի Տաճկաց (1630 ամի փրկչին):

ՎԿԱՅՔ

1. Մելիք—Սարուխան Բարտայու (տ. կ.)
2. Մելիք Փանոս Վարանտու—
3. Ատիքէկ Զրաբերտու (տ. կ.)
4. Մելիք Բայլասան Զարցիրիւ (ծարայ զտւառի):—
5. Մելիք Սլահնվերդի Խաչենոյ (տ. կ.)
6. Ալիքէկ (տ. կ.)
7. Մելիք Երգուէփ Զուլբարատու (Ոօկանապատու)
8. Խօջայ Ա՛ծատուր:
9. Մելիք Հախնազար Արդաւելուտի (տ. կ.)
10. Մանուչար Բէկ:—
11. Հասան-բէկ Գիւլամ (տ. կ.)
12. Մելիք Մեհրաբ ՎՀԱՊՈՒ:
13. Հարիքան ՎՀԱՊՈՒ (տ. կ.)
14. Ես լուսոյ (լուայ) զայսուիկ ճշմարիտ է, որպէս և զիտէ Ա՛ծ,—Մոլլա Մահմատ (որ և զրեալ է զիւկականն այսորիկ):

№ 2.

(Ետողի եւ (Տեղի) կենոյ
Երուրդ Շահաբաս
Արքային պարսից)

Սմբանաբարձրագոյնս Հրովարտակ տուաւ առ այն,

Զմի որովհետեւ յայտնի եղի. թէ բազում ժամանակաւ յառաջքան զայս զբայտնի կալուածս և զարդինաբեր շինութեա, եղեալս յերկրին Ղարաբաղու, ոմաք ի Հայոց տեղւոյն նուիրելով Մեծի վանիցն Խաչենոյ տուեալ են զայս ընդ տիրապետոթ. այնորիկ, և

4) Սոյն ֆիրմաններում յիշուած «Խաչենոյ մեծ վանքը» Գանձապարն է:

Ա. Հ.

ի ժամանակաց անտի հետէ նոյն կալուածք և արդիւնարիք շինութիւնք իրրե նուիրականք (վախփ) գտանինը ընդ իշխանութե՛ զարդարեակետաց և պաշտօնէից յիշեալ վանիցն Այլ այժմ ոմանք առանց իմ հետ օրինաւոր պատճառի հակառակ լուսաւոր օրինաց (Նարի) նեղեն գկեանս նոցաւ—զոյ հրամայեցաք, զի գերաստիճան վանմափայլ և բարձրապատիւ Բէկար-բէկն Ղարաբաղու Մուրթուզայ զուլիի Խան դանար Մուսայիք յատենի օրինաց վերահաստիթ զործելով ճշմարտութիւ, և եթէ յիշեալ կալուածքն և արդիւնարիք շնութիւնք իրրե նուիրականք յիալ իցէն ընդ իշխանութե՛ վարդապետաց և պաշտօնէից յիշեալ վանիցն, հրամայեցէ, զի մի ոք ի թուրքաց կամ ի հայոց ժողովրդոց ազօրինաւոր պատճառաշնօք նեղեցէ գկեանս նոցաւ, այլ կատարեցն զզօրութիւնն և զանցոյս կանոնաց օրինաց կատարումն ըստ այսմ սաստիկ պարտաւորաթիւն համարեցի: Գրեցաւ ի Բամազան ամսեանն 1065 ամի տաճեց (1649 ամի փրկչին):—

Ի վե գարձուածոյ հրովարտակին նշանակի՛—

Գրեցաւ համեմատ չարագրածոյ նախարարին ամենարարձրադարձոյն ատենի:

(տեղի կնքոյ)

(տ. կ.)

նախարարին)

(տ. կ.)

(տ. կ.)

Ե Յ.

Բարձրագոյն երաման եղեւ առ այն,

Զի որովհետեւ ընտրեալն ի նմանեաց Պետրոս կաթուղիկոսն Քրիստոնէից եցցոյց քիրովարտակն Արեգակնակայլ, յառաջացեալ ի բամազան ամսեանն 1065 ամի (1649 ամի փրկչին), որոյ զօրութիւնն է այս որովհետեւ յայտնի եղեւ, թէ բազում ժամանակաւ յառաջ քան զայս զյայտնի կալուածս ին զարդիւնարեր շինութիւնս, եղեալս յերկրին դարաբաղու, ոմանք ի հայոց տեղույն նուիրելով մեծի վանիցն խաչնոյ տուեալ են զայսն ընդ տիրապետութե՛ այնորիկ և ի ժամանակաց անտի հետէ նոյն կալուածք և արդիւնարենք շինութիւնք իրրե նուիրականք (վախփ) դտանին ընդ իշխանութե՛ վարդապետաց և պաշտօնէից յիշեալ վանիցն, այլ այժմ ոմանք առանց իրիք օրինաւոր պատճառի հակառակ լուսաւոր օրինաց (Նարի) նեղեն գկեանս նոցաւ Վաշոյ հրամայեցաք զի գերաստիճան վսեմափայլ և բարձրապատիւ Բէկար բէկն Ղարաբաղու Մուրթուզայ զուլիի խանն դանար Մուսայիք յատենի օրինաց վերահաստիթ զործելով ճշմարտութիւն, և եթէ յիշեալ կալուածքն և արդիւնարեր շինութիւնք իրրե նուիրականք լեալ իցեն ընդ իշխանութեամբ

վարդապետաց և պաշտօնէից յիշեալ վանիցն, հրամայեցէ, զի մի ոք ի թուրքաց կամ ի հայոց ժողովրդոց ապօրինաւոր պատճառաւնոք նույնացէ զինանս նոցա այլ կատարեցին զգօրութիւնս և զինածոյս կանոնաց օրինաց—և խնդրեաց այժմ զհրաման հաստատուն ի բարձրագոյն կառավարութեանէ մերմէ ի վերայ դործակալին լիազ չենոյ—ի հետևումն որոյ պարտի գործակալն Խաչենոյ որպէս և հրամայեալ է չնորհափայլ հրովարտակաւն ի կատար ածել զկարեորն օգնութեանց և ձեռնտութեանց յայսմ մասին, մի թոյլատրել ու մեք ընաւին հակառակել զօրութ. չնորափայլ հրովարտակին, և զկատարումն այսորիկ պարտաւորութ. իւր ճանաչել Գրեցաւ ի շապան ամսեանն 1080 ամի (1664 ամի փրկչին):

(Տեղի կնքոյ

ուղուրլու խանի

Զիատ օղլոյն.)

№ 4

Բարձրագոյն նրաման եղեւ առ այն.

Զի իշխանապետք, գործակալք, մելիք, զեղչաւագք, և ստրուկք լիամայ գաւառոաց, (որք են հինդ գաւառը Ղարաբաղու եղեալքն ընդ իշխանութ. նախսկին հինգ մելիքաց հայոց), յաղահովս կալով յողորմածութիւն բարձրագոյն սրտի մերոյ գիտասջիք, զի այժմ գլխաւորն Քրիստոնէից Մելիքքը կն մատոյց զինդրանս բարձրութեան մերում վասն այն թէ ի վազեմի ժամանակաց հետէ կալուածքն հանեաց Երկանաբարաց և այլ անդաստանք են ի թիւս նուիթակալուածոյ (վախփից) վանիցն Գանձասարայ և արդիւնք այնոցիկ ծախեալ են ի պէտս ի պէտս կառավարութ. վանիցն և միքարանութեանց նորին, և թէ այժմ ոմանք յօտարաց խօսեն զանտեղի բանս (ի մասին նոյն կալուածոյ): Այլ յայտնի եղել արդէն բարձրութեան մերում ի չնորհափայլ հրովարտակաց և յարժանահաւատ վկայութեանց, որպիսիք գտանին ի ձեռունոդա ընդ կնքովք վարդապետաց, մելիքաց, զեղչաւագք և պատուաւորաց երկրիս թէ յիշեալ նուիթակալուածքն պատկանին վանիցս Գանձասարայ:—Ուստի նրամայեցաք, զի առաջնումն կարգի արդիւնք եւ վայելչութիւնք յիշեալ նուիթակալուածոցն սացեալ ելք ի զոր դիցին ի պէս վարդապետաց եւ պատունիք: Կատարումն ըստ այսմ սամստիկ պարտաւորութիւն համարեցի: Գրեցաւ յամսեանն ճամատիւլ ամիր 1166 ամի տաճկաց (1750 ամի):

(Տեղ կնքոյ

փանան խանի.)

№ 5

(Վ. կայական)

Որովհետև յայտնի լեռ է օրինաւորութ. թէ ի վաղ ժամանակաց հետէ վարդապետք և այլ քանի մի անձինք ներքոյ եղեալք զբանի մի գանկ կալուածն՝ ի աեղիս ինչ գաւառին լաշենայ գնեալ էին, այլ յետ թուականին, յորում կառուցեալ է Խաչենոյ մեծ վանքն Գանձասարաց, նուիրեալ են զայն յնտագայ կերպիւ ի վախիք նոյն վանիցն ի հաճոյս Ա. յանու, զի որ ոք կաթուղիկոս, վարդապետ, քահանայ կամ այլ կառավարիչ գտցեն ի մեծ վանան անդ, զբանի մի գանկ կալուածն, որը նուիրեալ են ի վախիք վանիցն, ունկելով ի կառավարութ, կացցեն մնացեն անդանոր. և մի ոք ընդիմութեանչ արացյէ կամ նեղեսցէ զնոսա որովհետև հրամանօք արժանացիշատակ մեծ թագաւորացն այնպէս է հրամայեալ.

1. Կէլջիւկ (կասրայ) և հանքն երկանաքարաց, որում կալուածոյ պատկանին և շրջակայ տեղիքն, զորոյ զիեց գանկն նուիրեալ է ի վախիք վանիցն Գանձասարաց Սարդիս կաթուղիկոսն որդի Հատեր Մելիքին:

2. Նոյնպէս նուիրեալ է նա ի վախիք այլ և զագարակն Ար-նականայ, չորս և կէս տանկ:

3. զԱնդաստանն Արատանոց (Արատանոց պտրանոց) երկու դանկ:

4. Եւ զանդաստանն Քօռալանց (Կոռալաւ) չորս դանկ:

5. Գիւղն Աշմանց վեց տանկ, զոր նուիրեալ է վախիք Աէյտունի որդի Վէլիճանն:

6. Անդաստանն Աթաղի երեք գանկ, զոր նուիրեալ է առաջնորդ յիշեալ վանից Տէր Եղիայն:

7. Աղարակն Քեարքիձանայ (Կրկաչանց) աղարակն Փատարանց (Փատուանց) և աղարակն Ծաղկամանայ (Ծաղկայ), հինգ դանկ, զոր նուիրեալ են Բուղազն և Վախտանգն:

8. Անդաստանն Զուղտանոսի (Վարդան բերանց) վեց գանկ զոր նուիրեալ է որդի Մէջլիսի Ուլուբէկն:

9. Ազարակն Միսիրշահայ (Շահմասուր) վեց դանկ, զոր նուիրեալ է թռոն Զալալայ Տուրուն:

10. Վեց գանկ կալուածն Հէյվալու դեղջու

11. Ազարակն Ալմաջայ, վեց դանկ, զոր նուիրեալ է որդի Աթարէկի Այտենն:

12. Ազարակն Տանձաձորոյ (Թեաք-արմուտ), վեց դանկ զոր նուիրեալ է որդի Աղբաստի Մէյտունն:

13. Ազարակն Բեմի, վեց դանկ, զոր նուիրեալ է որդի Փեր-
համզայի Սմբատն:

Բաց յայսոցքի՛ զոյին նաեւ այլ զեղուեկ, Անդաստանի եւ ա-
զարակի ըստ հրովարտակաց բազաւորաց, և ըստ արծանահաւատ
վկայաթզթոց զրելոց Ծնդ կնքովք օրինաց (Շարի) այլ գրեցաւ աս-
տանօր ոչ ամենելին: Ըր ոք ըստ կալուածոց, պատեանելոց վանիցն
արասցէ դհակառակութ. ինչ կալեալ լիցի ի տանջանս յԱ՞ծ և ի
Մարգարէն: և եթէ յազգէ նուիրատուացն այսոցքի ի մասին բահ-
րայի (հաս յարմտնաց) լիշեալ նուիրակալուածոցն ի մէջ բերցին
զպատճառս ինչ դիմախօսութիւնք նոյն անընդունելի լինիցեն և
յաւուր զպատճառն առաջի Ա՞ծ և մարդարէին սեերես զտցեն,
և զիւեսուն բուման բավիրզոյ դրամս տուժեցեն մարմնաւոր դա-
տաւորաց: Այսքան բանք զրեցաւ ըստ վկայութէնց ի սաֆար ամ-
սեանն 1166 ամի տաճկաց (1750 ամի Փրկչին):

Վկայք

1. Եղիազար քեխայ զազանչեցի (տ. կ.)
2. Հասան քեխայ Տումուրչիվէնտու (Հէրանայ),
3. Եսայի քահանայ Բալուջայից գեղջ (տ. կ.)
4. Միրզախան քեխայ Խնձորեսսահնայ: (տ. կ.)
5. Մելիքսէտ քահ. Քօլատակ գեղջ
6. Զամալ քեխայ Ղօզու գեղջ (տ. կ.)
7. Եղեայ վարդապետ Ներքին վանից:
8. Ղուկաս վարդապետ Հասան քիւջտկեցի (Պտքեսուրե-
քայ) (տ. կ.)
9. Ալլահվերդի վեքիլ կողմանց խաչենոյ (տ. կ.)
10. Մելիք Գրիգոր բէկ կողմանց խաչենոյ մելիք (տ. կ.)
11. Մուրթուզայ զուլի բէկ նայիս խաչենոյ:
12. Գրազիր Գրիգոր որդի Մօլլայ Ազամւոյ (տ. կ.)
13. Պատուելի Շարովքէկ Բուրտաց (տ. կ.)
14. Խուտափերգի-բէկ Քուրտաց (տ. կ.)
15. Խալաֆ քեխայ Խրամարթ գեղջ (տ. կ.)
16. Ցովհան քեխայ (մատնէհարեալ է):
17. Զայր գիր ճշմարտութ. զրեցի փոքր ձառայ Մօլլայ Մահ-
մատ թաղի Ալիսաթի (տ. կ.)
18. Ավշար (տ. կ.)
19. Բարձրապատիւ մելիք Առստամ բէկ Զրաբերդու (տ. կ.)
20. Աւագ վարդապետ Զրաբերդու (տ. կ.)
21. Բէկնազար քէնդխուզայ Շուշեցի (տ. կ.)
22. Մելիք Շահնազար Վ'րանդու գաւառին:

23. Մատմատ-Զաֆար բէկ և աղայ Նայիպը Ասմասյից (5 մեռվածքնեանց); (տ. կ.) (տ. կ.)
24. Մելիք Եսայի գաւառին Դիզակայ (տ. կ.)
25. Միրզա բէկ գալամ (տ. կ.)
26. Մելիք Յովոչի մելիք գաւառին Թալիշու (տ. կ.)
27. Ներսէս կարդիկոս Աղուանից
28. Նիկողայոց քեխայ Դարարուլաղայ:

Հ 6

Բարձրագոյն հրաման եղեւ առ այն.

Զի մելիքը, գեղաւագը, զործակալը, հարկատերը հասից յարժանեաց կարգեալք յերկրին Դարարազու, և ն դիտաջիք, զի որովհեան ի գաղեմի ժամանակաց անտի հետէ ալօրարանէ, բնակիչնեւ մօակի վանիցն Գանձասարայ ազատ են եւ ապահովէ¹⁾ և ոչ ուրութ հարկաց տէրութեանն չէ լեալ բնոր նոսա բան ինչ և ոչ ըստ իմիք ինչ հաշւոյ, վանորոյ և մեք ողորմած ազոյնս նշանակեցաք այժմ և ազատ լինել հրամայեցաք, զի մի՛ ոք մերձեսցի ի նոսա. ի մասին նարկաց տէրութեան եւ այլոց հայտակութեանց. և մի՛ ոք ձեռնամուխ ինչ լիցի ի նոսա, այլ թոյլատրեսցի պարապել նոցա յազօթս. ի հասու լինելն անդ զօրութեան բարձրագոյն հրամանիս մի՛ ոք պահանջեսցէ ինչ ի նոցանէ հակառակ օրինացս, վ՝ զի յառաջ քան դայս չէ լեալ այնպիսի. (պահանջողութ) և յայսմ հետէ ես մի՛ լիցի։ Կատարումն ըստ այսո՞ւ պարտաւորութ. համարեսցի: Գրեցաւ յամսեանն բեաճապաղ միւրաձճապ 1162 ամի տաճկաց (1764 ամի փրկչին):

(Տ. կ.

Փանակ խանի)

Հ 7

(Վիճակ Ավագութիւն)

Բարձրապատիւ եւ հաւատարիմ.

Մելիք-Ալահիվերդի բեկ

Գիտասջիք, զի թէպետ երկուց ջրաղացից և երկուց այգեաց որդւոյն Մելիք-բէկին և վարդապետին աղվանկ վանից (Գանձասարայ) եղբայր նոցա տիրապետեալ էր, այլ այժմ ողորմութ. բարձր կառավարութ. մերոյ հաս ի վերայ կենաց աղավարութ. նոցա,

1) Բոլոր ընդդումներն իմս հնաւատական թ նըմնակ

ուստի և հրամայեցաք և պարզեւեցաք Սարգիս վարդապետին զմբ զբաղացն եւ զմի այզին, որք են կալուածք վանիցն, զի ընդ ձեռամբ իւրով ունելով զայնոսիկ, պարապեսի յաղօրս վ' ո բարձր-կառավարութ. մերոյ իսկ զմի այզին և զմի ջրազացն, որք պատկանէին Դանիէլին և նզրարց նորա, գարծեալ թողումք ի պարզե վերջնոյա վ' ոյ պարտիք ի հասանել զրոյ զիշեալ ջրազացն և զայդիմ յետա տոնեալ յանձնել անսպատճառ այնպէս, զի մի ոք այլ ևս բան ինչ ունիցի ըստ այնմ:

Եւ եթէ յիշեալ զուլին վէճ ունիցի ի մասին ժառանգական բաժնի եղբայրութ. աւարտեսցէ զայն զատաստանաւ. Շարի, և այլ ևս մի արասցէ զապօրինի պահանջաւ. Զկատարումն այսորիկ պարտաւորութ. Զեր համարեսջիք: Գրեցաւ յամօնեանն բճաճիապաղ միւտաճճապ 1203 ամի տաճկաց. 1787 ամի փրկչին:

(Տ. կ.
իբրահիմ խանին)

№ 8

Քրիստոնեայ Կեղծաւագի բեկի:

Դիտացես, զի որովհետե աւելի քսան ամօք յառաջ անժառ ուանդ Հասան քեխան զայզին իւր նուիրական (վախի) արարեալ տուեալ վարդապետի վանից Աղվանկ (Գանձասարայ) և այժմ եկեալ յարուցանել ըստ այնմ զապահանջութիւն, որք է անտեղի իմ յուղարկութ. ի քէն արարեալ, վս' յ հրամայի, զի մի' եւ ո'չ ինչ իւրիք պատճառաւ ձեռնամուի լինելով պահանջողութիւն ինչ ստասացես ըստ վերոյգրեալ այգւոյն երկիւղիւ ի պատժոյ, և զկատարումն այսորիկ քեզ պարտաւորութ. ծանեցես (?) ի 1204 ամի տաճկաց— 1788 ամի փրկչին:

(Տ. կ.
իբրահիմ խանին)

№ 9

Այս զրութ. (№=9) մատիտով ուզզուած է որ նոյնութեամբ արտագրում ենք յաւելումները նշանակելով X-ով, իսկ ջնջուածները Ա-ով:

Յուցակ կալուածոց եւ վարելահողոց նուիրելոց ի վախի վանիցն Գանձասարայ առեալ ի վկայարդոց.

1. Կէլջիւկ և հանքն երկանսքարաց, որում կալուածոյ պատ-

կանին և շրջակայ տեղվիքն, զսրոյ զիլց դանին նուրիեալ է ի վախի վանիքն Գանձասարայ Սարգիս կաթուողիկոսն որդի Նատիր մելիքին:

2. Աղարակն Մենակտանայ, զորոյ զշորս և X կէս դանկն
բնծայեալ է ի վախփ Ա նոյն Սարդիս կաթուղիեամս:

3. Անդամական Արատանց Ա (Առաջայնոց) զորոց զերկու տանիքն նույիրեալ է Ա. առջն Ասրդիս կաթուուղիկուն:

4. Զբար ունելի անտառաստանին Փուլալան. Ա կուռալան:

5. Գեղին Աշմանայ, վեց դահնկ, զոր նուիրեալ է Սէյտունի
սոսի վեհճանն:

6. Երեք զանկ անտառասանին Ա.թ աղի, զոր նորիրեալէ Խ նախ-
ևն առաջնորդն միեւալ վաճիպի (Տ.Պ. Եղիազարն).

7. Աղաքարքին Քերպի Ա Գլուխանայ Ա Մատուռանց և ագա-
հան Համեստանաւա (Ծակեսոյ) Տինգ դանիւ

8. Վեց դասի Զուգամնոսի կալուածոցն Ա (Վարդանն ըերանդ) Տառելուած է Ալեքսանդր Օւստաէկին:

զոր նութիրեալ է Աջջիսիր որդի Աւլուուցկու
9. վկց դանկ աղաքակն Երիխոյշառու չ տանկեղու դուր Սէյ-
տունն (՞) Շահմասուր չ որդի Աղբաւտի (Շահմասուր) զոր ընծայ-
եալ է Անեց Թորն Զասաւ Տուրսունն.

Ե ի լախփ թռոն զայալ օպերատոր:

10. Վեց տանկ և Հեծ, կալուածն Արքասու որդի ըմբակութիւնը (1)
11. Վեց դանկ Ազգարակին Ա ալմէջա չ կիւղակ նորիրեալ

12. Վեց դասեր ագարակն Տանձածորոյ (Տեաբ Արմուտ) զոր

13. Վեց դանկ Ազգարակն ընմիտ. զոր Նուբրեալ է իվալով

14. Վեց դանկ անդամատանն կիւղակու որ է ի Բալլուչայից գեղջ զոր նուիրեալ է որդի Զալարայ Արու բէկն 1).

Առաջնութեան

(1) $N = \lambda = 9 - h$, $12 - h$, $15 - h$ զրայի եկու զիծ է; բաշած. $N = \lambda = 1, 2, 4, 5, 6, 14$ սկզբից դրած է՝ \bullet վաներ տէր է»: $\lambda = 8$ «Առաջանորդ»: $\lambda = 14$ «Բայուցալ»: $N = 12$ «ու տէր է»: